Հավելված 1

ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ

ք . ……. «___»_____20 թ.

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ն, այսուհետև՝ Բանկ, ի դեմս ....., որը գործում է Կանոնադրության հիման վրա, մի կողմից և քաղ/ իրավ. անձ (տվյալները), այսուհետև՝ Հաճախորդ, մյուս կողմից, միասին անվանվելով «Կողմեր», կնքեցին սույն արբիտրաժային համաձայնությունը հետևյալի մասին.

1. Կողմերի միջև …. թ. և .....թ. կնքված թիվ…. և թիվ..... պայմանագրի(երի) և դրա կատարումն ապահովող ….թ. և ....թ. կնքված թիվ … և թիվ.... պայմանագրի(երի) կապակցությամբ ծագած բոլոր վեճերի լուծումը, բացառելով ընդհանուր իրավասության դատարանների ենթակայությունը, հանձնվում է Հայաստանի բանկերի միության «ֆինանսական արբիտրաժ» հիմնարկին:
2. «Ֆինանսական արբիտրաժում» գործի քննությունը իրականացվելու է «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքին, ՀԲՄ «Ֆինանսական արբիտրաժ» հիմնարկի կանոնադրությանը և «ֆինանսական արբիտրաժի կանոնակարգին» համապատասխան: Ընդ որում, սույնով հաճախորդը հավաստիացնում է, որ տեղեկացված է ՀԲՄ «Ֆինանսական արբիտրաժ»-ում գործերի քննության ընթացակարգին: Վերոհիշյալ նորմատիվային նյութերը տեղակայված են www.uba.am Հայաստանի բանկերի միության ինտերնետային կայքում, www.aeb.am Բանկի կայքում, ինչպես նաև դրանք կարելի է ստանալ Ֆինանսական արբիտրաժից, Բանկի գլխամասային գրասենյակից և մասնաճյուղերից:
3. Կողմերը սահմանում են, որ արբիտրաժային տրիբունալը ձևավորվում է ՀԲՄ «Ֆինանսական արբիտրաժի կանոնակարգին» համապատասխան:
4. Կողմերը պայմանավորվում են, որ վեճի քննությունը կիրականացվի միայն գրավոր նյութերի հիման վրա՝ առանց բանավոր քննության անցկացման:
5. Վեճերը լուծվում են ՀՀ նյութական իրավունքի նորմերին համապատասխան:
6. Արբիտրաժային դատավարության լեզուն հայերենն է, արբիտրաժի վայրը՝ ք.Երևանը:
7. Սույն համաձայնությունը կնքված է հայերեն լեզվով, երեք օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ՝ յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ և երրորդ օրինակը տրվում է ֆինանսական արբիտրաժին:

ԲԱՆԿ ՀԱՃԱԽՈՐԴ